ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5, 1955 Общественные науки

Գր. Գրիգորյան

«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԻ ՀԵՐՈՍՆԵՐ ՍԱՆԱՍԱՐԻ ԵՎ ԲԱՂԴԱՍԱՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Սանասար և Բաղդասար եղբայրները «Սասնա ծռեր» էպոսի առաջին ճյուղի գլխավոր կերպարներն են։ Նրանք, ինչպես և էպոսի բազմաթիվ այլ կերպարներ իրենց գործողությունների մի մասով հանդես են գալիս իբրև միֆական կերպարներ, իսկ մյուս մասով, իբրև իրական և խորապես մարդկային կերպարներ։ Առաջին դեպքում նրանք արտացոլում են հայ ժողովրդի միֆական մտածողության հետքերը, իսկ երկրորդ դեպքում՝ բնության և հասարակական երևույթների նկատմամբ նույն ժողովրդի ցուցաբերած միանգամայն իրական վերաբերմունքը, այդ երևույթների խորապես ռեալիստական մեկնաբանությունը, կյանքի ճանաչողության ժողովրդական ըմբռնումը։ Նրանց կերպարների այս տարբեր կողմերն ու գծերը ո՛չ հակադրվում և ո՛չ էլ ժխտում են միմյանց։ Ընդհակառակը, էպոսի մեջ դրանք, ինչպես ցույց կտրվի ստորև, որոշ իմաստով լրացնում են իրար, ձուլվում են իրար հետ, ստեղծելով միանգամայն ուրույն և միայն էպոսին բնորոշ կերպարներ։ Միֆականի և իրականի վարպետ միաձուլումը, որ կատարվում է դարերի ընթացքում, բազմաթիվ սերունդների ստեղծագործական ուժերի լարումով, կատարելապես ամբողջացնում է էպիկական կերպարը։ Անհնար է անուշադրության մատնել սրանցից մեկն ու մեկը, առանց խախտելու էպոսի բոլոր գլխավոր կերպարների, այդ թվում նաև Սանասարի և Բաղդասարի կերպարների ամբողջականությունը։ Ահա թե ինչու նրանց բնութագրման համար հավասարաչափ կարևոր են, ինչպես միֆական, այնպես էլ իրական կողմերի վերլուծությունը։

ՍԱՆԱՍԱՐՆ ՈՒ ԲԱՂԴԱՍԱՐԸ ԻԲՐԵՎ ՄԻՖԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐ

Սանասարն ու Բաղդասարն իբրև միֆական կերպարներ մարմնավորում են բնության ամենահզոր տարերքներից երկուսը՝ ջուրը և կրակը։ Էպոսի մյուս կերպարները նրանց տարբեր առիթներով կոչում են «ջրեղեն», «խրեղեն», կամ «անձնահուր»։ Այդպես են անվանում իրենց նաև Սանասարն ու Բաղդասարը։ Այդ կոչումներն ու անվանումները քմահաճ ու պատահական չեն, այլ հիմնված են էպոսում առկա կոնկրետ աշխարհայեցողության և դրանից բխող վիպական փաստերի վրա, փաստեր, որոնց իսկությանը դարեր շարունակ հավատացել են միֆաստեղծ ժողովուրդը և նրա ծոցից ելած վիպասանների բազմաթիվ սերունդներ։ Ըստ հիշյալ աշխարհայեցողության կամ բնության երևույթների ու մարդու միջև եղած կապի վերաբերյալ ժողովրդի ունեցած պատկերացման՝ Սանասարն ու Բաղդասարը գոյացել են իրենց մոր՝ Ծովինարի խմած «մի բուռ լիքը, մի բուռ կիսատ» ջրից։ Սերելով ջրից վիպասաններն, այնուհետև, նոր դեպքերի ու էպիզոդների պատմությամբ հետե-

վողոկանորեն զարգացրել ու հստստատել են նրանց ջրեզենությունը։ Այդ պատմություններից մեկը՝ կռապաշտ թագավորի հետապնդումներից ազատվելու համար Սանասարի ծովը նետվելու էպիզոդն է։ Նետվելով ծով՝ Սանասարն իրեն զգում է իր իսկական տարերքում։ Ազատ շրջում է ծովի հատակում, այնտեղից ձեռք է բերում Քուռկիկ Ջալալին և Թուր Կայծակին, խմում է ծովի հատակից բխող աղբյուրի ջուրը (հավանաբար այն ջուրը, որից խմել էր Ծովինարը) և ավելի մեծացած ու հզորացած դուրս գալիս երկրի վրա։ Այդ և մի շարք այլ փաստեր ցույց են տալիս, որ ջուրը Սանասարի ու Բաղդասարի մի-ֆական ծննդի ու գոյության հիմքն է։ Դրանում խորապես հավատացած են և իրենք՝ հերոսները։ Այդ է պատճառը, որ ծավալվող հետագա գործողություն-ների ընթացքում անընդհատ շփվում են ջրի հետ։ Իսկ այդ շփումը մեկ ընդ-միշտ ապահովելու նպատակով իրենց տունը կառուցում են «զորընդեղ լուլե մի ջրի» ակունքի վրա։ Ջրի ակունքի վրա կառուցելով Սասնա տունը, նրանք դրանով միաժամանակ ապահովում են այդ տան հաջորդ սերունդների ջրեղե-նությունն ու հզորությունը։

Լաո էդ ջուր ազնացորդու ջուր ա.
Որն որ էդ ջրեն խմա,
Ընդրենե ազնացորդի դեղնի.
Բ. 261

Էս ջրի գլուխ որտեղ եղնի
Էնտեղ մեր տուն շինինք, նստինք։
Էլան էդ սարի գլուխ աշեցին,
Գնացին էդ աղբրի ակ գտան։
Ու բերեցին քար վրը քարի դրեցին,
Սուն վրը սան շինեցին,
Անուն Սասուն դրեցին։
Բ. 362

Սանասար-Բաղդասար եղբայրները միաժամանակ անձրևաբեր են, հատ-կություն, որ սերտորեն առընչվում է նրանց ջրեղենության, «ծովայնության» հետ և պայմանավորվում է վերջիններով։ Պղնձե քաղաքում բանտարկ-ված «ակն արեգակ» աղջկան վիշապից ազատելուց հետո ջուրը անձրևի պես լցվում է քաղաքը։ Սանասարը առավոտյան իրեն հյուրընկալող ծերուկին պատմում է, թե «էս գիշեր սև ամպ ըմ Սասնա խետ եկեր էր, անձրև ենու մո-տեն եկավ, քաղաք թրջեց»։ «Սասնո սև ամպը» այստեղ ամպրոպային դյու-ցազն Սանասարն է, որ «երբ կռվում է ծովային վիշապի հետ «ծովը կատաղում է», բարձրանում է «վիշապ քամին» և անձրև է գալիս այն քաղաքում, ուր հա-ցի ու ջրի պակասություն կա»[1]։ Իրականության մեջ և ժողովրդի պատկերաց-մամբ ջուրը անձրևի ձևով կամ այնպես հանդես է գալիս իբրև արգասավորու-թյան աղբյուր և կյանքի սիմվոլ, իսկ հակադիր ուժը՝ տվյալ դեպքում վիշապը, որ արգելակում է նրա օգտագործումը, պետք է հանդես գա և հանդես է գա-լիս իբրև մահվան սիմվոլ։ Սանասար ու Բաղդասար եղբայրները անձրևի կամ ջրի համար կռվելով վիշապների դեմ և սպանելով նրանց, ըստ էության, ներ-

[1] Ս. Արեղյան. Հայ ժողովրդական վեպը, Վաղարշապատ, 1908, էջ 169։

կայանում են իբրև կյանքի սիմվոլներ։ Այս իմաստով Պղնձե քաղաքում և այլուր ջրարգել ու մարդակեր վիշապների դեմ նրանց մղած կռիվը — դա կյանքի կռիվն է մահվան դեմ։

Այս տեսակետից ուշագրավ է նաև նույն Պղնձե քաղաքում Քառասուն-Ճոզ-Ծամի ազատագրման համար նրանց մղած կռիվը։ Սանասարը ցանկանում է ամուսնանալ Քառասուն-Ճոզ-Ծամի հետ։ Սակայն այդ նրան հեշտությամբ չի հաջողվում, որովհետև աղջիկը բանտարկված է ծովում նստած նույն մահվան ուժի վիշապի և վերջինիս երկվորյակ թագավորի կողմից, որ աղջկա հայրն է համարվում։ «Այդտեղ փակված աղջիկը,— գրում է պրոֆ. Մ. Աբեղյանը,— նույն ինքն արեգակն է, որ ծովային վիշապը հափշտակել է։ Ակունք թե մատանի, իսկապես՝ մատանու ակն, վիշապի բերանին, դա միևնույն «ակն ու արեգակ աղջիկն է», որ և մի պատմվածքով դարձել է «ճրագի պես վառվող ոսկի խնձոր»։ Արդ, այդ ակն ու արեգակը գերի է վիշապի ձեռին, ուստի և երկինքը մթնել է, կամ պատկերավոր խոսքով, աղջկա ապարանքը սև ու մութն է, սև վարագույրներով ծածկված է։ Գալիս է ծովային հրեղեն դյուցազն Սանասարը, ազատում է վիշապի բերնից ակը և լուսավորում է քաղաքը, այսինքն արեգակը երևում է»[1]։ Այսպիսով, կյանքի համար երկվորյակ եղբայրների մղած կռիվն այստեղ հանդես է գալիս աղջկա՝ լույսի, արևի ազատագրման համար մղած կռվի ձևով։ Իսկ եթե նկատի ունենանք, որ վիշապը «փոթորկի, պտուտահողմի և փոթորկալից ամպի անձնավորումն է» և որ «հենց ինքը փոթորիկը, պտուտահողմն ու ամպը — մի շար ոգի է, որ սովորաբար օձի (վիշապի) կերպարանքով է ներկայանում, բայց և զանազան կերպարանքներ՝ ընդունում»[2]. ապա Պղնձե քաղաքում Սանասարի ու Բաղդասարի մղած կռիվը կնույնանա վիշապների դեմ Վահագնի մղած կռվին, իսկ իրենք՝ վիշապաքաղ Վահագնին։ Եվ ուրեմն, ինչպես Վահագն իր ծնունդով ու արարքներով սիմվոլացնում է լույսի, արևի կռիվը վիշապի, փոթորկի, պտուտահողմի, խավարի ու նրա զանազան այլակերպությունների դեմ, այնպես էլ Սանասարն ու Բաղդասարը իրենց ծնունդով ու գործողություններով սիմվոլացնում են արևի կռիվը խավարի դեմ, կյանքի կռիվը մահվան դեմ։

Սրանք ինքնին վկայում են արդեն, որ Սանասար-Բաղդասար եղբայրները ջրեղեն լինելուց բացի՝ միաժամանակ հրեղեն են, այսինքն՝ իրենց կերպարներում մարմնավորում են լույսը, կրակը, արևը։ Իսկ եթե դրան ավելացնենք և այն, որ նրանց ծնվելուց անմիջապես հետո կնքում են թոնրի կրակի վրա, ապա միանգամայն պարզ կլինի նրանց կրակային էությունը։ Կրակի ու նրանց էության նույնությամբ է բացատրվում հրեղեն ծովից հանված Թուր Կայծակին գործածելու կարողությունը և այն սերտ կապը, որ գոյություն ունի ինչպես Սանասարի, այնպես էլ Սասնա մյուս գլխավոր հերոսների և կրակն ու կայծակն իր մեջ մարմնավորող միֆական հրեղեն Քուռկիկ Ջալալիի միջև։ Սանասարի հրեղենությամբ է բացատրվում նաև նրա ազատ ու համարձակ գործողությունները երկնային հրեղեն ծովում։ Հուրն ու ջուրը, բնության այդ հզոր տարերքները ժողովրդի ամենանախնական պատկերացմամբ նույնացել են։ Երկրի ծովը և երկնքի կապույտը համարվել են նույնը։ Այդ պատճառով Սանասարը ջրից ելած հրեղեն Քուռկիկ Ջալալին նստած ազատ շրջում է երկրի և

---

[1] Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, Վաղարշապատ, 1908, էջ 169։

[2] Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելներ, Վաղարշապատ, 1901, էջ 151—152։

երկնքի ծովում։ Այդ երկու ծովում, ըստ նախնական պատկերացման, շրջում է նաև արևը։ Նա ելնում է երկրի ծովից, շրջում է երկնքի ծովում և ապա նորից իջնում երկրի ծով։ Սանասարը իբրև կրակային էություն իր արարքներով և առանձնապես վիշապների դեմ մղած կռիվներով նմանվում է ինչպես կայծակին կամ ամպրոպին, այնպես էլ արևին։ Նմանօրինակ դիցաբանական պատկերացման արդյունք է և Վահագնը, որն իբրև կայծակ, իբրև արև, ծուխ ու բոց արձակելով, ծնվում է երկրային ծովից։

Վերոհիշյալ հատկությունների տեր միֆական կերպարները էպոսում գործող սովորական մարդկանցից տարբերվում են նաև իրենց վիթխարի հասակով, ֆիզիկական ամենահաղթ ուժով, շատակերությամբ և բազմաթիվ այլ գծերով, որոնք ինչպես կտեսնենք հետո, նույնությամբ ժառանգաբար անցնում են հաջորդ սերունդներին։

Սանասարի ու Բաղդասարի արտաքինին վերաբերվող մի շարք արտահայտություններից և անուղղակի պատմություններից իմանում ենք, որ նրանք նման են լեռնանման հսկաների, վիթխարի հեն ու հսաղթանդամ։ Սանասարը, երբ Քուռկիկ Ջալալին նստած ծովի հատակից դուրս է գալիս, վիպասանները նրանց մեծությունը արտահայտում են իրար վրա դրված սարերի պատկերով. «Բաղդասար տեսավ, որ մի սար ելիր ա սարի վրա» (Ա. 131)։ Այդ նույն Սանասարը այնքան վիթխարահասակ է, որ սովորական մարդուն պահում է իր գրպանում։ Նրա թևերի հաստությունը ահ ու սարսափ է պատճառում հզոր Համտոլին «Ձեռ չէր, ապա գերան էր» (Ա. 988), ասում է նաև Խանդութին։ Երկվորյակ եղբայրների հասակի անբնական մեծությունը սարսափեցնում է նաև թշնամիներին՝ իրենց կռապաշտ հորը և մյուս թագավորներին։ «Թակավոր իրիշկեց, էտոնց պետութեն որ տեսավ, վախեցավ էնոնց մոտեն» (Ա. 878)։

Սանասար-Բաղդասար եղբայրների հասակի հիպերբոլիկ մեծությունը պայմանավորված է նրանց միֆական ծնունդով։ Դրանով է պայմանավորված նաև, ինչպես վերը նշեցինք, նրանց հասակին կատարելապես ներդաշնակող ամենահաղթ հզոր ուժը։ Ջրի տարերային ուժն իրենց մեջ մարմնավորելով, նրանք անվախ կռվում են ջրարգել վիշապների դեմ, թե՛ ցամաքում և թե՛ ջրի մեջ՝ ծովի հատակում։ Ծովի հատակում Սանասարը զսպում է Քուռկիկ Ջալալին։ Նրանց կարճ խոսակցությունից երևում է, որ հրեղեն, անհնազանդ Քուռկիկ Ջալալին ենթարկվում է Սանասարին, շնորհիվ նրա ծովային հզոր ուժի (Ա. 130)։ Տորք Անգեղի նման վիթխարի ժայռերը տեղաշարժելը այդ հերոսների համար սովորական բան է։ Մի քանի պատումներում, օրինակ, նրանք Սասնա բերդը կառուցում են չորս քարաժայռերից։ Սանասարը ձեռքի մի հարվածով «թոցնում» է կռապաշտ թագավորի հրամանով մորը, իրեն և եղբորը սպանել ցանկացող դահճի գլուխը (Ա. 848)։ Մենակ կռվում է կռապաշտ թագավորի անհամար զորքի դեմ Բաղդադում, 60 գոմշանման «փահլևանների» դեմ Պղնձե քաղաքում և այլն։ Իբրև «ջրեղեններ» ու «հրեղեններ» նրանք չեն ընկրկում ինչպես բնության, այնպես էլ հասարակական չար ուժերի առաջ, ինչքան էլ հզոր լինեն վերջիններս։ Նրանք անպարտելի հսկաներ են. «Ես մարթերք ածտրհար են» (Ա. 842), «ընդոնց մեջք գետին դնող չկա» (Բ. 261)։ Այդ պատճառով նրանց տրվում է նաև «փահլևան» կամ «ֆերզի ազգ» կոչումը։ «Դուք ֆերզի ազգ եք, ձեր բանը զոռով ա» (ԲԲ. 241) ասում է Ծովինարը իր տղաներին։

Այս «ֆերզների» բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ նրանց շատակերությունն է։ Սանասարը մի քանի րոպեում «մի դեզ» հացի հետ միասին ուտում է «մեկ ճոչ տաշտ կաթ, որ չորս մարդ կլողկաներ մեչն» (Ա. 851)։ Բաղդասարը Պղնձե քաղաքի թագավորի դեմ մղած կռվի ընթացքում օրական «քառասուն փռան խաց է» ուտում, և «քառասուն» ջրկիրի ջուր խմում։ «Բաղդասար տղեն քառասուն օր, քառասուն գիշեր կռիվ երավ, քառասուն ֆռան խաց, ինչ իջար էր էրի մենակ կերավ, քառասուն մարդու ջուր ինչ կրկրին, մենակ խմավ, չթողավ էդ բուլուր քաղաք ոչ խաց ուտին, ոչ ջուր խմին» (Ա. 152)։ Սանասար-Բաղդասար եղբայրների, ինչպես և էպոսի բոլոր գլխավոր հերոսների մոտ նրանց արտաքինի, ֆիզիկական հզոր ուժի, շատակերության և միֆական հերոսներին բնորոշ մյուս առանձնահատկությունների հետ միասին համապատասխանաբար հիպերբոլացվում են նաև մյուս հատկությունները, օրինակ, համառությունը, տոկունությունը և այլն։ Բաղդասարը ոչ միայն կարողանում է շատ ուտել, այլև հարկ եղած դեպքում երկար ժամանակ մնալ քաղցած ու ծարավ։ Երբ Պղնձե քաղաքի թագավորը մահվան սպառնալիքով սրգելում է «ֆրանչիներին» հաց, իսկ ջրկիրներին՝ ջուր մատակարարել Բաղդասարին, նա քառասուն օր էլ կռվում է քաղցած։ «Քառասուն օր Բաղդասար տղեն կերավ, խմավ, կռիվ երավ, քառասուն օր էլ անոթի, ծարավ կռիվ երավ» (Ա. 152)։

Կարելի է նշել վիպական կերպարանք ստացած միֆական ուրիշ գծեր ևս։ Բայց բերածներն էլ բավական են համոզվելու, որ Սանասար-Բաղդասար եղբայրները, ինչպես իրենց ծնունդով, այնպես էլ էպոսում ծավալած հետագա գործողություններով իսկական միֆական կերպարներ են։ Ջրեղեններ, հրեղեններ և անձրևաբերներ, կայծակ, արև, կյանք ընդդեմ մահվան ուժերի, վիթխարի հասակ, և ամենահզոր ուժ, շատակերություն և գերբնական տոկունություն — սրանք են երկվորյակ եղբայրների, իբրև միֆական կերպարների բնորոշ առանձնահատկությունները։

Այս բոլորով հանդերձ, նրանք, ինչպես արդեն նշել ենք, միաժամանակ հասարակական և անհատական ռեալ կյանքով ապրող միանգամայն իրական մարդիկ են, որոնք իրենց արարքներով ու վարքագծով ներկայացնում են հայ ժողովրդի պատմական վաղեմի անցյալը, նրա մաքառումներն ու ձգտումները։ Այսինքն՝ իբրև վիպական կերպարներ նրանք արտացոլում են հայ ժողովրդի պատմականորեն ձևավորված բնավորության մի քանի գծերը, երբեք չկորցնելով էպոսի մյուս կերպարներից տարբերող իրենց անհատականությունը։ Այժմ, որն է նրանց կերպարների իրական կողմը, կամ իրենցից ինչ են ներկայացնում նրանք, իբրև իրական կերպարներ և իբրև անհատականություններ։

ՍԱՆԱՍԱՐ-ԲԱՂԴԱՍԱՐ ԵՂԲԱՅՐՆԵՐՆ ԻԲՐԵՎ ԻՐԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐ

Սանասար-Բաղդասար եղբայրների հետ են կապված էպոսի առաջին ճյուղում ծավալվող բոլոր գործողությունները՝ սկսած կռապաշտ թագավորի սպանությունից, վերջացրած Քառասուն-Ճող-Ծամի ազատագրման համար մղած կռիվներով և եղբայրների ամուսնությամբ։ Բոլոր այդ իրադարձությունների մեջ ղեկավար ու որոշիչ դերը պատկանում է երկվորյակ եղբայրներին, նրանք են ընթացք և ուղղություն տալիս գործողություններին, նրանք են իմաս-

տավորում գործողությունները և որոշում նրանց ելքը։ Այս նշանակում է, որ գործողությունները կատարվում են ոչ թե պատահականորեն, կամ ավելի ճիշտ, նրանք գործում են ոչ թե դեպքերի բերումով, տարերայնորեն, այլ, ընդհակառակը, կազմակերպված ու որոշակի նպատակադրումով։ Նրանց որոշակի նպատակադրումը, որ միշտ ունի հասարակական խոր բովանդակություն, արտահայտվում է ոչ միայն մի գործողության, այլև մի ամբողջ շարք գործողությունների մեջ։ Իբրև օրինակ հիշենք բերդաշինությունը, որը կազմում է առաջին ճյուղի առաջին մասում ծավալվող գործողությունների լեյտ մոտիվը և երկվորյակ եղբայրների մտահոգության առարկան։ Տուն ունենալու գաղափարը ծագելով կռապաշտ թագավորի երկրից փախչելուց հետո, նրանց երկար անտուն թափառումների ընթացքում, այնուհետև իշխում է նրանց գործողությունների վրա և հրամայաբար մղում այն «լուլե մի ջուրը», որի ակունքի վրա նրանք առաջին անգամ որոշում են տուն կառուցել։ Ամբողջապես համակվելով բերդաշինության գաղափարով նրանք կարճ ժամանակից հետո հրաժարվում են «արևելից» թագավորի մոտ ծառայելուց, համարելով այդ իրենց նպատակի իրագործման ճանապարհին ընկած խոշորագույն արգելքներից մեկը։ Մի օր անգամ չեն տիրում «կռապաշտ» կամ «Աջմու» թագավորի երկրին՝ նրան սպանելուց և նրա ղորքին հաղթելուց հետո, այլ իրենց մորը վերցրած հեռանում են այնտեղից։ Ի վերջո վճռականապես մերժում են իրենց պապի (Ծովինարի հոր) խնդրանքը նրա մոտ մնալու և նրա երկրում թագավորելու համար։ Նրանց ո՛չ հրապուրում է հանգիստ ծառայությունը, ո՛չ օտար երկրներ տիրելը և ո՛չ էլ իրենց պապի՝ Գագիկ թագավորի թույլ ու անզոր երկիրը, որը սիմվոլացնում է դարերով ծեծկված ու թալանված Հայաստանը։ Նրանց հրապուրում է միայն հզոր ջրի ակունքի վրա կառուցվելիք բերդի գաղափարը։ Ահա թե ինչու երկար թափառումներից հետո նրանք կրկին վերադառնում են այնտեղ և ձեռք ձեռքի տված կառուցում են իրենց՝ սեփական տունը։ Իրենց տան կամ բերդի կառուցման գործում երկվորյակ եղբայրների ցուցաբերած այսօրինակ հետևողականությունը ինքնին խոսում է այդ բերդի բովանդակության և արտակարգ նշանակության մասին։ Եվ իսկապես, խորանալով ճյուղի առաջին մասում ծավալվող գործողությունների և բերդաշինության բուն շարժառիթների ու պատճառների մեջ՝ նկատում ենք, որ դա ոչ թե երկվորյակ եղբայրների կամ սասունցիների բերդն է, այլ հայ ժողովրդի տունը, ճիշտ այնպես, ինչպես «Մասնա ծռեր» էպոսը ոչ թե սասունցիների պատմությունն է, այլ հայ ժողովրդի մղած դարավոր հերոսամարտերի բանաստեղծական-վիպական պատմությունը։ Ինչքան լայն է վերջինիս ընդգրկումն ու նշանակությունը, այնքան լայն է նրանում պատկերվող կերպարների ու դեպքերի, տվյալ դեպքում բերդաշինության ընդգրկումն ու նշանակությունը։ Ինչպես վեպը, Սասունում ստեղծվելով հանդերձ իր համազգային համաժողովրդական նշանակությամբ, դուրս է եկել նրա սահմաններից և դարձել է նրա պատմական կյանքն ու ձգտումներն արտացոլող հայելին, այնպես էլ նրանում պատկերվող բերդը դադարել է երկվորյակ եղբայրների կամ սասունցիների բերդը լինելուց, նրանց տունը լինելուց և դարձել է հայ ժողովրդի տունը, նրա բանաստեղծական-վիպական հայրենիքի սիմվոլը։ Այս տեսակետից միանգամայն բնական է, որ երկվորյակ եղբայրները նրա հետ կապում են աղատ ու ան-

ֆախ ապրելու որոշակի ձգտումներ, նրա մեջ իրենց ստեղծող ժողովրդի նման տեսնում են բռնակալներին դիմադրելու և ջախջախելու անսպառ ուժ, կյանքը ազատորեն տնօրինող, Գագիկ թագավորի անզոր Հայաստանին հակադիր նոր, հզոր Հայաստան։

Այս ինքնին ցույց է տալիս, որ նրանց կառուցած վիթխարի ու անառիկ բերդի պատկերումով վիպասանները վերարտադրել են ոչ թե մռայլ միջնադարում գոյություն ունեցող ռեալ իրականությունը, որպիսին չկար և չէր կարող լինել ո՛չ լեռնային Սասունում և ո՛չ էլ այլուր, ինչպես սխալ կարծել են ոմանք (Հ. Մելիքյան և այլն), այլ ազատ և հզոր Հայաստան ունենալու մասին ժողովրդի դարավոր ձգտումը։ Երկվորյակ եղբայրների բերդաշինության համարձակ մտահղացմամբ ու դրա իրականացումով վիպասանները, ըստ էության, ներկայացրել են ամեն գույնի հարստահարիչներից ազատ, հայ ժողովրդի ցանկալի, իդեալական հայրենիքը։ Արդ, քանի որ այն հիմնադրվում է երկու եղբայրների հերոսական ջանքերով միայն, նրանց աշխատանքային սխրագործությամբ, ապա պարզ է, որ նրանք, ամենայն իրավունքով, պետք է հանդես գան և հանդես են գալիս որպես հայ ժողովրդի տան, նրա ազատ և ուժեղ հայրենիքի հիմնադիրներ։ Այսպիսով, առաջին ճյուղի առաջին մասում ծավալված իրենց գործողություններով նրանք սիմվոլացնում են հայ ժողովրդի էպիկական-բանաստեղծական հայրենիքի հիմնադրումը և ներկայացնում իբրև դրա հիմնադրման սիմվոլներ։ Այս է նրանց հասարակական վարքագծի գլխավոր և ամենաբնորոշ առանձնահատկությունը, որով և նրանք ամբողջապես ու անվերապահորեն տարբերվում են էպոսի մյուս բոլոր կերպարներից։

Երկվորյակ եղբայրների բնութագիրը, սակայն, միայն դրանով չի սպառվում։ Ինչպես այդ համազգային, համաժողովրդական տան կառուցման պրոցեսում, այնպես էլ նրանից առաջ և հետո ծավալված գործողություններում դրսևորվում են նրանց կերպարների մյուս՝ ոչ պակաս կարևոր առանձնահատկությունները՝ աշխատասիրությունը, ժողովրդասիրությունը, հայրենասիրությունը, ատելությունը բռնության նկատմամբ և մի քանի այլ գծեր։ Նախ տեսնենք աշխատասիրությունը։

Աշխատանքը Սանասարի ու Բաղդասարի տարերքն է։ Կռապաշտ թագավորի (իրենց հոր) հետապնդումների հետևանքով դեռ մանկուց փախչում են տնից և շուտով սովորում սեփական աշխատանքով պահպանել իրենց գոյությունը։ Նրանց մերթ տեսնում ենք թագավորի ձիապանների պաշտոնում, մերթ «ռանչպարության» ման գալիս, մերթ որսորդություն անելիս, մերթ իրենց բերդի հիմքը դնելիս։ Այս տեսակետից նրանց կյանքի պատմությունը, սկսած Բաղդադից հեռանալու օրից, վերջացրած բերդաշինությամբ, ըստ էության, աշխատանքային դրվագների պատմություն է։ Այդ պատմության փաստերն արդեն բերված և, ըստ ամենայնի, լուսաբանված են «Աշխատանքը և աշխատանքի ըմբռնումը էպոսում» գլխում. այստեղ պետք է նշել միայն, որ աշխատասիրությունը Սանասարի ու Բաղդասարի մոտ խորապես իմաստավորվում և ամբողջանում է բերդաշինության պրոցեսում։ Բերդաշինությունը կամ «Սասնա տան» կառուցումը նրանց աշխատասիրության կուլմինացիան է, այն բարձրակետը, որտեղ նրանք առավել լրիվությամբ են դրսևորում իրենց

բնավորության այս կամ այն գիծը։ Բերդաշինության պրոցեսում է, օրինակ, որ նրանք հանդես են գալիս իբրև աշխատանքի հերոսներ, իբրև աշխատանքային սխրագործություններ կատարող մարդիկ։ Եվ իսկապես, միայն աշխատանքային սխրագործությամբ կարելի է բացատրել այնպիսի մի վիթխարի բերդի կառուցումը, ինչպիսին, «Սասնա բերդն» է, որի շուրջը սովորական մարդը կարողանում է շրջել մեկ օրվա ընթացքում՝ «արևածագից-արևածագ»։ Անձնուրաց աշխատասիրությամբ է բացատրվում նաև այն փաստը, որ նրանք աշխատանքի պրոցեսում մոռանում են քաղցն ու ծարավը, սառնամանիքն ու կիզիչ արևը։ Նրանց համար աշխատանքը հարկադրանք, ծանրագույն բեռ ու տանջանք չէ, այլ կենսական անհրաժեշտություն է և գերագույն հաճույք։ Այս է, ինչպես «Սասնա բերդը», այնպես էլ իրենց հետ տարած գյուղացիների տները կառուցելու ժամանակ նրանց ցուցաբերած անօրինակ եռանդի աղբյուրներից մեկը։

Սասնա տան կառուցման պրոցեսում է դրսևորվում նաև նրանց վարպետությունը, օջախ ստեղծելու և այն շենացնելու հատկությունները։ Երկվորյակ եղբայրները մեր էպոսի առաջին վարպետներն են։ Ի հակադրություն աշխատանքից խորշող բոլոր ֆեոդալների և ամեն դույնի պորտաբույծների, նրանք իրենք են կառուցում իրենց տունը։ «Քար բերին, լրացրցին, իրենց տուն իրարու հետ շինեցին» (Ա. 142)։ Ստեղծարար աշխատանքի և հմուտ կառուցման համար նրանց վեպի առաջին ճյուղի գրեթե բոլոր պատումներում տրվում է վարպետ կամ «ուստա» կոչումը։ «Բաղդասար քար կրից, Սանասար ելավ ուստա, շարից պատ» (Ա. 317)։ Մի այլ տեղ, «Սանասար պետ-պետ քարեր կպիրեր, Բաղդասար կշարեր» (Ա. 884)։ Իբրև շինարար ուժեր նրանք ներկայացնում են շինարար ու վարպետ հայ ժողովրդին։ Սեփական աշխատանքով տուն ունենալը նրանց ազնիվ ու առաջավոր նպատակադրման մի կողմն է միայն։ Այդ նպատակադրման մյուս կողմը կառուցած տունը շենացնելն է, իսկական օջախ ստեղծելն է, որը նույնպես հրաշալի կերպով իրականացնում են նրանք։ Այս տեսակետից հիշատակության արժանի է նորակառույց Սասունում «քառասուն տուն» գյուղացիների վերաբնակեցման և նրանց համար տներ կառուցելու փաստը։ Իրենց շրջապատելով արդար աշխատանքի մարդկանցով, վերացնելով հարկերն ու տուրքերը («Էս տեղի մարդոց նա խարջ կառնեն, նա խարաջ» Բ. 144), հերոսաբար պաշտպանելով խաղաղությունն ու նրանց աշխատանքի արդյունքը, նրանք դրանով հնարավորություն են ստեղծում Սասնա տան արագ «շենացման», արագ ծաղկման համար։ Եվ պատահական չէ, որ ի տարբերություն աղքատությունից աչք չբացող էպոսի մյուս հերոսների, երկվորյակ եղբայրների և Սասունի նոր բնակիչների աղքատության մասին հեռավոր ակնարկ անգամ չկա։ Ընդհակառակն, ամենայն որոշակիությամբ շեշտվում է նրանց հարստությունը, «ղանգինությունը»։ Վեպը ցույց է տալիս, որ անձնուրաց ու ազնիվ աշխատանքի շնորհիվ կարճ ժամանակում հարստանում են, թե՛ «մի էշ ու ճախարակով» Սասուն եկած գյուղացիները և թե՛ բացարձակապես ոչինչ չունեցող եղբայրները։ «Էնպես անուն կը ստանան, կը ղանգինանա» — կհարստանան (Ա. 610), հիացած պատմում են վիպասանները։ Սասունում ստեղծված խաղաղ և ապահով կյանքը աստիճանարար դեպի Սասուն է բերում ֆեոդալական դաժան ճնշումներից ու անապահով կյանքից

փոխած մարդկանց նորանոր խմբեր։ Եվ մենք տեսնում ենք, որ Սասունը շուտով դառնում է մեծ ու հզոր քաղաք։ Դրա հետևանքով բարձրանում է եղբայրների անունը («Բաղդասարի անուն, Սանասարի բանձր ելավ ես խետին», ԲԲ. 242), և նրանց աշխատանքային սխրանքների ու քաջության համբավը տարածվում է ամեն տեղ՝ հասնելով աշխարհի բոլոր կողմերում տառապող աշխատավոր մարդկանց։

Էնանկ փահլևան եղան Սանասար, Բաղդասար,
Վոր էնոնց ձեն աշխարք բռնեց։
Շատ մարդեր, որ լսան, ասին.
— Ջանըմ, մենք նստեր ենք էստեղ, ի՞նչ,—
Գող մարդեր ամեն ժամանակիկ
Կրգան, մեր մալ զարնեն, կտանեն։
Ըհը, Վալլա, մենք կերթանք եդա Սասուն,
Քոր երկու փահլևան կա,
Քոր մեկ մարդ մեր մալեր չզարնե, տանի։
Հա քիչ-քիչ, հա քիչ-քիչ գացին ենոնց մոտ,
Շատացան, ահագին քաղաք մ ելավ։

Ա. 945

Այս պարզ ու աներկբա ձևով վկայում է Սանասարի ու Բաղդասարի ստեղծագործ ու շինարար վիթխարի ուժի մասին։ Անձնուրաց աշխատասիրություն ու վարպետություն, օջախ ստեղծելու, այն շենացնելու և հարստացնելու անդադրում ձգտում — ահա հայ ժողովրդի բնավորության բնորոշ գծերը, որոնք ցայտուն կերպով դրսևորված են երկվորյակ եղբայրների խորապես ռեալիստական կերպարներում։

Վերոհիշյալ օրինակը բնորոշ է նաև այն տեսակետից, որ բացահայտում է Սանասարի ու Բաղդասարի ժողովրդասիրությունը։ Նրանք ոչ թե մերժում են հալածական ժողովրդի խնդրանքը Սասունում ապաստանելու մասին, ինչպես կռապաշտ թագավորի երկրից փախչելուց հետո մերժում էին իրենց «Արզրում, Կարս նստող ամիրաններն» ու թագավորները (Բ.Գ. 10), այլ սիրով ընդունում են նրանց, տներ կառուցում նրանց համար, օգնում նրանց հարստացմանը։ «Սանասար Բաղդասար դրկիցներու համար տուն շինեցին ու նստեցուցին հինի» (Ա. 987)։ Նշանակալից է, որ եղբայրները Սասուն գալով իրենց բերդը կառուցելուց առաջ են կառուցում «դրրկիցների» տները։ «Առաջ շինենք զեդոնց ավահիք, ըդ ֆուխարեք (խեղճերը) չըն կոնա արևուն առջև կենա» առանց վարանելու վճռում են նրանք (Բ. 12)։ Եվ այդ անում են նրանց նկատմամբ տածած անշահախնդիր սիրուց, մարդասիրությունից։ Ի դեպ նկատենք, որ ժողովրդասիրությունը Սանասարի ու Բաղդասարի մոտ երևան է գալիս աշխատավոր մարդու նկատմամբ տածած հոգատարության ու հարգանքի ձևով, նրան պաշտպանելու և ընդհանրապես ժողովրդական մարդասիրության ձևով։ Այս տեսակետից ի լրումն արդեն բերված փաստերի հիշատակության արժանի են ևս երկու փաստ, որոնցից մեկը Կանաչ քաղաքի ջրարգել վիշապին սպանելու էպիզոդն է։ Վիշապը արգելել է ջրի աղատ օգտագործումը, ջուր է տա-

ւիս քաղաքացիներին ամեն անգամ մի աղջիկ ստանալուց հետո։ Հրեշի դեմ կռվել չկարողանալու պատճառով քաղաքի բնակիչներն ու թագավորը հնազանդությամբ պահպանում են սահմանված կարգը։ Երկվորյակ եղբայրներին խորապես ցնցում է քաղաքացիների և առանձնապես աղջիկների անօգնական վիճակը։ Եվ ահա նրանք հանուն մարդասիրության, վտանգի ենթարկելով իրենց կյանքը, դուրս են գալիս հրեշի դեմ, սպանում են նրան, և անխուսափելի մահից ազատում այդ օրը վիշապին կեր դարձող թագավորի աղջկան, իսկ ի դեմս նրա նաև բոլոր աղջիկներին։ Որ նրանք այդ կատարում են մարդասիրական ջերմ զգացմունքներից դրդված՝ ցայտուն կերպով երևում է ազատված աղջկա հետ եղբայրներից մեկի պսակվելու մասին թագավորի առաջարկը վճռականապես մերժելու, ինչպես նաև իրենց արածի համար առաջարկվող որևէ նվեր-վարձատրությունից հրաժարվելու փաստից։

Թագավոր ասաց,— Սանասար, ասա, ի՞նչ կուզես, տամ քե։
Սանասար ասաց.— պա մ չեմ ուզի։
Թագավոր երեք անգամ խարցընեց,— ի՞նչ կուզես, տամ։
Սանասար պա մ չուզեց թակավորից։
Թակավոր ասաց,— Որ պա մը չըս ուզի,
Ախչիկ չխո քոն ա, արի քե փսակեմ։
Սանասար ասաց,— մկա վախտ չունեմ փսակվել։
Ա. 845

Ժողովրդական նույն մարդասիրությունն է առաջնորդում երկվորյակ եղբայրներին նաև Պղնձե քաղաքում ծավալած գործողություններում, և առանձնապես Քառասուն-Ճող-Ծամի ծերացած ու «կեսից քար դարձած» (Ա. 486) փեսացուներին կախարդանքից ազատելիս։ Սանասարը, իսկ մի քանի պատումներում նաև Բաղդասարը չեն հանդուրժում փեսացուների նկատմամբ Քառասուն-Ճող-Ծամի ցուցաբերած անմարդկային վերաբերմունքը։ Քառասուն-Ճող-Ծամին ջերմորեն սիրելով հանդերձ, Բաղդասարը կշտամբում է նրան և հետը չպսակվելու կամ սպանելու սպառնալիքով ստիպում է անօգնական փեսացուներին ազատել կախարդանքից։ «Բաղդասար տղեն ասաց,— Լիրբ անաստված, ես քառասուն մարդ քի խամար եկած։ Յա տուն կը բերես, ես մարդիկ՝ ինչ ժամանակ եկած են՝ էն հասակին կը դարձուս (Ա. 154), սաղացրցես անիս ինսան, յա չէ, զքի կը զինենք, քո արուն կը թափենք էսոնց վրեն, կերթանք» (Ա. 490)։ Կարելի է բերել նաև այլ փաստեր, էպոսն այդ հնարավորությունը տալիս է, բայց բերածներն էլ բավական են համոզվելու, որ երկվորյակ եղբայրների գործունեության ու բնավորության կարևորագույն գծերից մեկն էլ մարդասիրության ձևով արտահայտված ժողովրդասիրությունն է։

Այսօրինակ ժողովրդասիրությունը հիմք է հանդիսացել նրանց կերպարների մյուս կարևոր առանձնահատկությանը՝ հայրենասիրությանը, որը դեռևս ոչ որոշակիորեն ձևավորված հայրենասիրություն է։ Եվ այդ ոչ այն պատճառով, որ նրանք ընդունակ չեն խորապես ապրելու իսկական հայրենասիրության զգացումը, այլ այն պատճառով միայն, որ դեռևս լինելիության պրոցեսում է այդ զգացման հիմքը, այլ կերպ ասած, դեռևս չի ավարտվել ու ամրողջացվել հայրենիքն իրև այդպիսին։ Այն առայժմ նրանց ներկայանում է

«օջախի ու վաթանի» ձևով, որի հետևանքով էլ հայրենասիրությունն ընդունում է օջախն ու վաթանը սիրելու ձև։ Սրան իբրև ապացույց կարող է ծառայել բերդաշինության համար եղբայրների ծավալած եռանդուն գործունեությունը, որի մասին հանգամանորեն խոսվեց վերևում։ Այստեղ վերհիշենք մի փաստ միայն՝ Սասունում աշխատավոր մարդկանց բնակեցնելու փաստը, հաստատելու, որ օջախի կամ լայն առումով հայրենիքի հիմքը ժողովուրդն է, իսկ հայրենասիրության հիմքը ժողովրդասիրությունը, որն, ըստ էության, նշանակում է, թե առանց աշխատավոր մարդու, առանց ժողովրդի մեռած և անիմաստ են հայրենիքն ու հայրենասիրությունը։ Այս բանը խորապես գիտակցում են ինչպես վիպասանները, այնպես էլ նրանց կերտած հերոսներ Սանասարն ու Բաղդասարը։ Եվ բնավ պատահական չէ, որ նրանք էպոսի գրեթե բոլոր պատումներում միայնակ չեն մեկնում բերդաշինության վայրը, այլ միշտ իրենց հետ տանում են աշխատավոր մարդկանց՝ ժողովրդին։ Ավելին, ատելով մենակեցությունը ամեն միջոց գործադրում են իրենց շրջապատելու աշխատավոր մարդկանց նորանոր խմբերով, նրանց մեջ տեսնելով «Սասնա տան» վեհությունն ու հզորությունը։

«Սասնա տան» աշխատավոր ժողովրդի մեջ մարմնավորվելով հայրենիքն ու նրա սերը, Սանասար-Բաղդասար եղբայրները հերոսաբար պաշտպանում են նրա անկախությունն ու ազատությունը, անհաշտ կռիվ մղելով ստրկության ու բռնության դեմ՝ որտեղ և ինչ ձևով էլ հանդես գալու լինեն դրանք։ Դեռ մանկուց «կոքատանը» իրենց սպանել ցանկացող կռապաշտ թագավորի արարքով խորապես ոգալով բռնության սարսափը՝ նրանք հանդես են բերում բռնակալին անողոքաբար պատժելու անկոտրում կամք։ Բռնության նկատմամբ տածած այրող ատելությունը և բոլոր բռնակալներին անխնա ոչնչացնելու ուղեգիծն այնուհետև դառնում է երկվորյակ եղբայրներին առաջնորդող սրբազան սկզբունքը նրանց ողջ կյանքի ընթացքում։ Եվ մենք տեսնում ենք, իրոք, որ իրենց բռնակալ հորը սպանելուց հետո նրանք նույնպիսի անողոքությամբ սպանում են նաև մի քանի այլ թագավորների, ջրարգել-մարդակեր վիշապների ու դևերի։ Ի լրումն նախորդ գլուխներում բերված փաստերի հիշատակության արժանի է առանձնապես Քառասուն-Ճող-Ծամի ազատագրման համար Պղնձե քաղաքի թագավորի դեմ երկվորյակ եղբայրների մղած հերոսական կռիվը, որը հանդիսանում է նրանց ազատասիրության և բռնության նկատմամբ տածած ատելության բարձրակետը։

Պղնձե քաղաքի թագավորի աղջիկ Քառասուն-Ճող-Ծամը իր իրական վիճակով ներկայացնում է աղջկա և ընդհանրապես կնոջ դարավոր ստրկական վիճակը։ Քառասուն-Ճող-Ծամի բնակարանի նկարագրությունը և նրա արտակարգ մռայլության մասին Պղնձե քաղաքի հայ ծերուկի տված բացատրությունները դրա ապացույցներից մեկն է։

Խալվուր առից զտղեն,
Ելավ տանիս, ձեռ պարզից, ասաց։
— Էս սիվ փանջարեք, սա ամարաթներ կտիսնա՞ս—
Թագավորի աղջկա բնակարանն ի.
Կը աիսնա՞ս եդ սիվ հերդիսներ։
Ասաց,— ափո ջան, խա՛։

Ասաց.— Էնի սիվ փառդայ ի կապած հերդիկներուն,
Որ աղջիկ տուռ չտիսնա։
Տղեն ասաց.— Ափո,
Էս ի՞նչի, տանիս ճրագի պես կը վառվա։
Ասաց,— որտի էնի ոսկի խնձուր ի.
Գուրզ ըմ կա էնու հերդիսնիրու տակ.
Ինչ ղվաթով էլնի, էն գուրզ վիրուցի,
Ջարկի էն ոսկի խնձուր բիրի տակ, դնի ուր ծուց,
Թագավորի խետ կռիվ անի, կտրիճ ելնի,
Աղջիկ կը տանի իրեն։

Ա. 149

Այստեղ «սիվ փառդայներով հերդիկները» ծածկած բնակարանը մի կատարյալ բանտ է, ուր տառապում է կինը ազատության և «լույս աշխարհ» տեսնելու կարոտով։ Այդ անկասկած է և նոր փաստերի ու բացատրությունների կարիք չի զգացվում։ Ամբողջ խնդիրն այն է, սակայն, որ ժողովուրդը չի բավարարվել կնոջ ստրկական վիճակի օբյեկտիվ նկարագրությամբ միայն, այլ ավելի առաջ է անցել և տվել է նրա ստրկական կապանքների ոչնչացման գաղափարը, որն հրաշալի կերպով իրականացնում են Սանասար-Բաղդասար եղբայրները Պղնձե քաղաքում ծավալած իրենց գործողությունների ընթացքում։ Արտահայտելով ժողովրդի դարավոր երազանքը, նրանք վերցնում, մի կողմ են նետում Քառասուն-Ճող-Ծամի պալատ-բանտի «հերդիկներու» տակ դրված «գյուրզը», որ ներկայացնում է կնոջ ազատագրման ճանապարհին ընկած մեծագույն արգելքներից մեկը՝ ֆեոդալական կնատյաց օրենքները, կատարում են բռնությունը սիմվոլացնող աղջկա հոր դժվարագույն առաջադրանքները, սպասում են նրա 60 սոսկավիթխար «փահլևաններին» և տիրանում պալատ-բանտի աշտարակում ճրագի պես վառվող ոսկի խնձորին՝ բանտարկված Քառասուն-Ճող-Ծամին։ Կռվելով բռնության դեմ, նրանք, այսպիսով, բանտից ազատում են Քառասուն-Ճող-Ծամին, պաշտպանելով նրա, իսկ հանձին նրա նաև, առհասարակ, կնոջ ազատագրության և հասարակության իրավահավասար անդամ լինելու գաղափարը։ Նշանակալից է, որ երկվորյակ եղբայրները այդ բոլորը կատարում են ոչ թե դեպքերի բերումով, իմիջիայլոց, այլ կանխամտածված ձևով և ուժերի դերագույն լարումով։ Եվ ապա, այդ պայքարում նրանց առաջնորդում է ոչ այնքան այն գաղափարը, որ նրանք ազատագրում են իրենց հարսնացուին, որքան այն գաղափարը, որ կռվում են ֆեոդալական բռնակալության դեմ հանուն բոլոր կանանց ազատագրության։ Այս նշանակում է, որ նրանց կռիվը, ըստ էության, մի բռնակալի դեմ մղված կռիվ չէ, այլ մեկի միջոցով բոլոր բռնակալների և, վերջին հաշվով, նրանց պաշտպանող ֆեոդալական հասարակության դեմ մղված կռիվ է։ Սրա մեջ է Քառասուն-Ճող-Ծամի համար, իբրև իրական կնոջ համար, երկվորյակ եղբայրների մղած կռիվներն արտացոլող էպիզոդների գաղափարական բովանդակությունն ու ճանաչողական-գեղարվեստական արժեքը, որը և իմաստավորում է նրանց հերոսական կերպարները իբրև բռնության թշնամիների և ազատության անձնուրաց պաշտպանների։

Շատ կարևոր է նշել, որ երկվորյակ եղբայրները բռնության և հասարակության թշնամի ուժերի դեմ մղած բոլոր կռիվներից դուրս են գալիս հաղ-

թանական։ Ոչ մի արգելք ու դժվարություն չի ընկճում նրանց կամքը, չի գերակշռում նրանց ֆիզիկական ու հոգևոր վիթխարի ուժին։ Անարդարն ու վնասակարը, չարն ու բռնակալը ինչքան էլ ուժեղ լինեն, վերջիվերջո պարտվում են և անողոքաբար պատժվում նրանց կողմից։ Նրանք հաղթանակում են սկսած իրենց գիտակցական գործունեության առաջին քայլերից, վերջացրած բերդաշինությամբ և արտաքին ու ներքին հարստահարիչների դեմ մղած հերոսական կռիվներով։ Այդ համատարած հաղթանակը պայմանավորված է, ինչպես առասպելական կերպարանք ստացած նրանց ֆիզիկական հզոր ուժով, հայրենիքի հիմքը հանդիսացող «օջախի» նկատմամբ տածած ջերմ սիրով, մարդասիրությամբ ու ժողովրդասիրությամբ, ազատասիրությամբ ու բռնության նկատմամբ տածած կիզիչ ատելությամբ, այնպես էլ առանձնապես Սանասարի ու Բաղդասարի միջև եղած անխզելի կապով, նրանց անձնուրաց եղբայրասիրությամբ։ Օտար միջավայրը, ամեն վայրկյան սպառնացող մահը, հալածական ու թափառական կյանքը հենց սկզբից նրանց մեջ վառում են միմյանց ջերմորեն սիրելու և, բնականաբար, միմյանց անձնուրաց կերպով պաշտպանելու և օգնելու զգացումը, որն աստիճանաբար համակելով նրանց ողջ էությունը դառնում է բնավորություն։ Թշնամական միջավայրն ու ամեն վայրկյան սպասվելիք դավադրությունը նրանց ստիպում է լինել վերին աստիճանի զգույշ և միասին։ Անջատումը նրանց համար վերջանում է ծանր հետևանքներով, որոշ դեպքերում կանգնեցնելով նույնիսկ անխուսափելի մահվան սպառնալիքի առաջ։ Իրարից հեռու լինելը նրանց պարտության նախադրյալն է, մահ է նրանց համար։ Ահա թե ինչու նրանք միասին են, ինչպես առտնին կյանքում, խաղաղ ստեղծարար աշխատանքի, այնպես էլ թշնամիներից այդ աշխատանքը պաշտպանող կռիվների ընթացքում։ Թշնամիների դեմ եղբայրներից մեկի եղած կռիվը միշտ վերջանում է հաղթանակով այն դեպքում միայն երբ օգնության է հասնում մյուսը։ Սանասարի բացակայությունից օգտվելով «Կռապաշտ թագավոր... կը պիրը յոթ տարվա գինին կը սա, Բաղդասար կը խմի, կը սարխոշնա, կընգընի։ Դորսեն կատնին զգուրզեր, կը գան սպանելու» (Ա. 479)։ Բաղդասարին այս անխուսափելի մահից փրկում է Սանասարը։ «Սանասար խասավ թագավորին էլ, մարգերուն էլ սպանեց, առավ ուր ախպեր, Եթի տուն, (Ա. 134)։ Նա հետո զգաստացած եղբորը պատմում է «Որ ես քե չխաներ վե, տու կը մեռներ» (Ա. 857)։ Նույն կերպ է վարվում նաև Բաղդասարը Սանասարի նկատմամբ։ Սանասարը Պղնձե քաղաքում Քառասուն-Ճող-Ծամի համար թագավորի և նրա 60 «Գոմշանման փահլևաններ» դեմ մղած մի քանի օրվա անհավասար կռվում թուլանում է և ենթարկվում մահվան սպառնալիքի։ «Սանասար անցկում ելիր ջորով (հաղիվ) ըզինք կը պաշտպանի» (Ա. 544)։ Սանասարին փրկում և հաղթությունն ապահովում է Բաղդասարը Պղնձե քաղաքում եղբոր հետ մղած հերոսական կռվի միջոցով։

Սանասար լսավ դորզի մ ծեն կը գա.
Իրիշկեց, կը խը՝ ուր ախպեր Բաղդասարն ը իկեր։
Ըսաց.— Ուայ, ախպեր, ատ տո՞ւն էր եկար իմ հավարին.
Ըսաց.— Ուայ, ախպեր, հալա տու սա՞ղ իս։
Դե տու էտա դեխեն, իս էսա դեխեն, սպանը թրխ գա։
Դորսեն համա զարկեցին, ըիթուն ը քաղաք սպանեցին։
Ա. 489

Եղբայրասիրությամբ և միմյանց օգնելու միջոցով նրանք հաղթանակում են նաև աշխատանքում։ Բերդաշինությունը դրա լավագույն ապացույցներից մեկն է։ Եթե չլիներ նրանց համերաշխ գործունեությունը, չէր լինի նաև վիթխարի բերդը՝ «Սասնա ջոջ տունը»։ Սրանք են Սանասարի ու Բաղդասարի անկեղծ, ջերմ ու գորովալից եղբայրասիրության փաստերը, փաստեր, որոնք այն ի վերջո վերածում են միասնության ու համերաշխության։ Այդ միասնությունն ու համերաշխությունն այնքան կուռ է ու հաստատուն, որ դիմանում է ամենադաժան փորձություններին։ Սիրո և առանձնապես խանդի զգացումն անգամ չի կարողանում սասանել նրա հիմքերը։ Սանասարին ուղղված Քառասուն-Ճող-Ծամի սիրո նամակի պատճառով Բաղդասարը խանդի ահավոր զգացում է ապրում, մենամարտում է եղբոր հետ և նույնիսկ ցանկանում է սպանել։ Այնուհանդերձ հաղթանակում է եղբայրասիրությունը։ Եվ մենք տեսնում ենք, որ կարճ ժամանակից հետո Բաղդասարը մեղանչում է եղբոր առաջ ու ներողություն խնդրում նրանից իր անխոհեմ արարքի համար։ Այսպիսով, անհատական կրքերը, ինչքան էլ ուժեղ լինեն նրանք, ինչպիսի արագությամբ առաջանում, նույնպիսի արագությամբ էլ տեղի են տալիս եղբայրասիրության առաջ, մի անգամ ևս ընդգծելով վերջինիս անսասանելիությունն ու հասարակական խոր բովանդակությունը։ Այս տեսակետից հատկանշական է այն փաստը, որ եղբայրները ինչպես հիշյալ գժտությունից, այնպես էլ դրանից շատ տարիներ հետո՝ ընդհուպ մինչև իրենց մահը՝ ապրում են համերաշխ ու հավատարիմ միմյանց նկատմամբ։ Նրանց եղբայրությունը միասնության և համերաշխության տիպար է, գեղարվեստական խոր ընդհանրացման արդյունք։ Այս իմաստով նրանց վարքագծի մեջ գեղարվեստորեն արտացոլվել է հայ ժողովրդի կուռ միասնությունն ու համերաշխությունը, որն հանդիսացել է արտաքին ու ներքին հարստահարիչների դեմ տարած հաղթանակների և ժողովրդի հարատևության կարևորագույն նախադրյալներից մեկը։ Այսպիսով, Սանասարի ու Բաղդասարի համերաշխությունն ու անխախտ հավատարմությունը, նրանց անձնուրաց և խորապես մարդկային եղբայրասիրությունը իբրև բնավորություն հայ ժողովրդի ազգային բնավորության նույնանման գծերի մարմնացումն է, նրա արտահայտությունը։ Սրա մեջ է Սանասարի ու Բաղդասարի եղբայրության ու եղբայրասիրության ճանաչողական-գեղարվեստական արժեքը։

Այս բոլորը ցույց են տալիս, որ նրանց կերպարները ոչ թե ինքնահնար ու անհող ֆանտազիայի ծնունդ են, այլ հայ ժողովրդի պատմականորեն ձևավորված բնավորության մի քանի բնորոշ գծերի խորը ճանաչման արդյունքն են, գեղարվեստական մեծ ընդհանրացումներ են։ Այս հանգամանքը, ինչպես արդեն նկատել ենք, նրանց չի զրկում կոնկրետությունից ու մարդկային անհատականությունից, ընդհակառակն, ընդգծում է վերջինս, որովհետև գեղարվեստական ընդհանրացումը բարձրանում է ոչ թե ընդհանուր գծերի, անորոշ ու հեղհեղուկ բնավորությունների, այլ միայն կոնկրետ ու խորապես մարդկային անհատականությունների վրա։ Սանասարն ու Բաղդասարը կոնկրետ ու խորապես մարդկային անհատականություններ են։ Նրանք այդպիսին են ինչպես հասարակական, այնպես էլ իրենց անձնական կյանքում, թեև որոշակի սահման չկա նրանց հասարակականի և անձնականի միջև։ Դրանք գրեթե միշտ հանդես են գալիս միասնաբար։ Իբրև օրինակ կարելի է հիշել իրենց հոր՝ կռապաշտ թագավորի սպանությունը, իրենց բերդի և Սասնա տան կառուցու-

մը, Քառասուն-Ճող-Ծամի համար Պղնձե քաղաքում եղբայրների մղած կռիվները և այլն։ Կռապաշտ թագավորին սպանելով, նրանք սպանում են ոչ միայն իրենց անձնական թշնամուն, այլև հայ ժողովրդի և թագավորի կրունկի տակ հեծող մյուս ժողովուրդների դաժանագույն թշնամուն։ Սասնա բերդը կառուցելով, նրանք դնում են ոչ միայն իրենց սեփական օջախի, այլև հայ ժողովրդի «ջոջ տան», նրա վիպական, գեղարվեստական հայրենիքի հիմքը։ Պղնձե քաղաքում Քառասուն-ճող-ծամի համար նրանց մղած կռիվը ոչ միայն իրենց հարսնացուի, այլև առհասարակ կնոջ ազատության համար մղած կռիվ է։ Երկվորյակ եղբայրների գործունեության հասարակական կողմն, այսպիսով, բարձրանում է անձնականի վրա, նոր իմաստ ու նշանակություն հաղորդելով վերջինիս։ Այս տեսակետից անձնականը դադարում է լոկ անձնական լինելուց և դառնում է հասարակականի անբաժանելի մասը, նրա դրսևորման եղանակներից մեկը։ Այս բոլորն, այսպիսով, վկայում են նրանց գործունեության անձնական ու հասարակական կողմերի միասնության և փոխադարձ պայմանավորվածության մասին։ Այդ միաձուլվածությունն այնքան օրգանական է, որ նրա մեջ դժվար է անձնականը տարբերել ու սահմանազատել հասարակականից և, առավել ևս, հակադրել միմյանց։ Այս պարզ է և նոր ապացույցների կարիք չկա։ Սակայն անհրաժեշտ է նշել, որ այդ բոլորը բնավ չեն բացառում նրանց վարքագծի կամ բնավորության զուտ անձնականությունը, անհատականությունը։ Խնդիրն այն է, որ միասնաբար հանդես եկող գծերի հետ միասին նրանք ունեն նաև առանձին հանդես եկող անձնական այնպիսի գծեր, որոնք ավելի շոշափելի են դարձնում նրանց կերպարները, կերպարներ, որոնց համար ոչինչ մարդկային օտար չէ։ Այս տեսակետից բնորոշ են ֆիզիկական ցավի, տխրության ու լացի, սիրո և ուրախության, խանդի և ատելության ու բազմաթիվ, այլ խորապես մարդկային զգացումների առկայությունը եղբայրների մոտ։ Իբրև օրինակ վերհիշենք մի քանի փաստեր։ Քառասուն-Ճող-Ծամի սիրո նամակի պատճառով Բաղդասարը մենամարտում է եղբոր հետ և ցանկանում է սպանել նրան, իսկ Սանասարը պարզապես զբաղեցնում է, մտածելով այդ կերպ իջեցնել խանդից առաջացած նրա զայրույթը։ Բայց երբ նկատում է, որ Բաղդասարը չի հրաժարվում իրեն սպանելու մտքից, մի անգամ թույլ հարվածում է նրան։ Գյուրզը կպչում է Բաղդասարի ոտքին և նա ցավից ուշագնաց է լինում։ «Սանասար գյուրզն էթալ, դիպավ ախպոր մեկ ոտաց, խելք կնաց, ընկավ էտա տեղ։ Սանասար շլկեց ախպոր, պերեց էթալ տուն, նստավ, շուր լուս ելաց։ Լուս պացվավ ախպոր ուշկ եկավ վերեն, վերկացավ, նստեց, Սանասար ասաց.— ախպեր ետ ինչ ելավ, տու էտա ցեղ էլար։ Ասաց.— Ոտս ցավաց, իմ խելք կնաց» (Ա. 850)։ Բերված օրինակն ուշագրավ է նաև այն տեսակետից, որ ընդգծում է Սանասարի հոգեկան ապրումների արտահայտություններից մեկը՝ տխրությունն ու լացը, որն առաջանում է եղբոր կիսամեռ վիճակի խոր զգացման ու ընկալման հետևանքով։ Նա նույն ձևով է արտահայտում իր անհանգստությունն ու վիշտը Բաղդասարի կյանքի մյուս բոլոր տխուր պարագաներում։ Ամպի միջոցով, երբ իմանում է, որ վտանգված է Բաղդասարի կյանքը, լալիս է և լացով շտապում նրան օգնության։ «Ես իրիշկեմ յըմ ախպոր ամբ, տիսնայնք՝ ինչպես ա»։ «Իրիշկաց ամրը մթներ էր, էլ լոս չկար ամբը մեջ։ Ելաց, եկավ տուն։ Քեռխեր խարցնեց, ասաց.— Սանասար ընչի կը լաս։— Քեռխեր, յիմ ախպոր ամբ մթներ ա, ես տերթամ» (Ա. 856)։ Նույնը պետք է ասել նաև Բաղդասարի մասին։ Նա էլ

տխրում, լալիս ու հոգեկան խոր տվայտանք է ապրում, երբ իմանում է, որ վտանգի մեջ է Սանասարի կյանքը։ Ծովի հատակից դուրս եկած, հզորացած ու կերպարանափոխված Սանասարի այն հարցին, թե «ի՞նչի լաց կըլնիս», Բաղդասարը պատասխանում է՝ «ես լաց չիլնիմ, բավ ով տի լաց ըլնի, մե աղբեր կար, ինե թալեց ծով...» (Ա. 131)։ Իբրև իրական մարդիկ նրանք գիտեն ջերմորեն սիրել ինչպես միմյանց, այնպես էլ իրենց մորն ու հարսնացուին։ Միմյանց սիրելու օրինակներ արդեն բերվեց։ Այստեղ նշենք միայն, որ որդիական ջերմագին սիրո պատճառով է, որ նրանք Սասունից վերադառնում են Բաղդադ և անխուսափելի մահից ազատում են իրենց մորը (Ա. 847)։ Նրանք չեն կարողանում անտարբեր մնալ նաև Քառասուն-Ճող-Ծամի սիրո նամակին։ Իրենց հարսնացուին խորապես սիրելու պատճառով է, որ հերոսաբար հաղթահարում են բոլոր արգելքներն ու դժվարությունները Պղնձե քաղաքում։ Քառասուն-Ճող-Ծամի, իսկ մի քանի պատումներում նաև Գոհար խանումի նկատմամբ Բաղդասարի տածած կրակոտ ու հզոր սիրո արդյունք պիտի համարել նրա մեջ առաջացած խանդի և ատելության զգացումները, որոնք նրան հանգեցնում են եղբոր հետ մենամարտելու և եղբորն սպանելու վճռին։ «Բաղդասար տեսավ՝ թուխտ ըմ կա պարցի տակ, առեց կարտած. թխտի մեջ կրած՝ է՝ «Զինմաչինա թագավոր Գոհար խանումից շատ պարև Սանասարին, Բաղդասարին, Սանասարին»։ Բաղդասարն ասաց.— ես ի՞նչ պան ա, երկու տիր պարև կիրե Սանասարին, մեկ տիր՝ ձի (Ա. 850)։ Կըսը «Յան իս տը մնամ ժիր, յան իմ ախպեր» (Ա. 538)։ Մի այլ տեղ կարդում ենք «Բաղդասարի հերս չիճնը, կըսը.— անկարելի ա, յան իս տը մնամ ժիր, յան են։ Դուրսեն կելնեն, ուրինց ծիանք կը խեծնեն, կիլնին մեյդան կռիվ» (Ա. 484)։ Կարելի է շարունակել փաստերը, բայց բերածներն էլ բավական են համոզվելու, որ նրանք, իրենց անձնական կյանքում էլ ոչնչով չեն տարբերվում սովորական աշխարհիկ մարդուց։ Մարդկային ամենասազնիվ զգացումները (սեր մոր, եղբոր և կնոջ նկատմամբ), մարդկային առաքինություններն ու թուլությունները (զղջալ, ներել, խանդել, և այլն) նրանց իրական կերպարների բնորոշ գծերն են։ Հիշյալ փաստերն, այսպիսով, աներկրա ձևով վկայում են Սանասարի ու Բաղդասարի կերպարների խորը մարդկայնության մասին և, դրանով իսկ, ժխտում այն տարածված կարծիքը, թե էպոսի հերոսներին՝ իբրև դիցարանական բիրա ուժի տեր հերոսների, խորթ է էմոցիան և ընդհանրապես մարդու հոգեկան աշխարհն իր տարբեր արտահայտություններով։

Սանասար-Բաղդասար եղբայրների համար, ինչպես արդեն տեսանք, ոչինչ մարդկային օտար չէ։ Այս իմաստով նրանք իրար նման են։ Սակայն այդ նմանությունը երբեք չի նույնացնում նրանց։ Իրենց ծննդի, հասարակական վարքագծի և անձնական բազմաթիվ հատկանիշների նմանությամբ ու նույնությամբ հանդերձ նրանք որոշակիորեն տարբերվում են իրարից նույնիսկ բացարձակապես նույն նպատակին ուղղված գործողություններում։ Հիշենք հենց թեկուզ նշանավոր բերդաշինությունը։ Երկուսն էլ կլանված են այդ աշխատանքով։ Սակայն վիթխարի քառաժայռերը մեկը կրում է հանգիստ, առանց ուժերի լարման (Սանասար), իսկ մյուսը (Բաղդասար) այդ նույնը կատարում է ուժերի ծայրագույն լարումով։ Նույն բերդաշինության պրոցեսում մեկը (Սանասար) հանդես է բերում դժվարությունները հաղթահարելու անկոտրում կամք, նպատակին հասնելու վառ ձգտում, իսկ մյուսը (Բաղդասար) նույն նպատակին ձգտելով հանդերձ մի պահ տեղի է տալիս դժվարությունների

առաջ, տրտնջում է դժվարություններից։ «Սասնա ծռերի» Բ. հատորի, Ա պատումում, օրինակ, Բաղդասարը (Արամելիք) առաջարկում է Սանասարին թողնել ըերդաշինությունը «որսի ալանի» միս ուտելու և հիվանդություններին դիմադրել չկարողանալու պատճառով։

Մեկ տաս քսան օր բանան վըր էդ քոշկին.
Աբամելիք եկավ ըն մեկ օր,
Տեսավ որ՝ Սանասար թալկեր էր
Ու քուն ընղեր էր վրեն,
Արինոտ նեջրներ հըմղալ անեփել
Թալեր էր ի գետին ու քներ էր,
Շատ կըսկծած ընդոր ուղուրին,
Ու ասեց.—Աղբեր էլի երթանք,
Հարի երբ պիտի մնանք մենք հոդա,
Ու անլի միս ուտենք։
Աստված որ իղեր մըզի,
Մեր պապու քոշկն ու սարեն կիտեր։

Բ. 10

Վիպասանները ընդգծում են այնուհետև նրանց ֆիզիկական ուժերի միջև եղած տարբերությունը։ Պատումներից մեկում (Ա. հատոր ԺԹ պատում) ցույց է տրվում, օրինակ, որ Սանասարը յոթ անգամ ուժեղ է Բաղդասարից (Ա. 853)։ Ուժերի այս տարբերությունը վիպասանները բացատրում են նրանց միֆական ծննդի հանգամանքներով, այն բանով, որ Սանասարը «բհամ» է եկել, գոյացել է Ծովինարի խմած «մի բուռ լիքը» ջրից, իսկ Բաղդասարը «կիսատ բուռ» ջրից։ Վիպասանները Սանասարի ֆիզիկական հզորությամբ են բացատրում նաև նրա մյուս առավելությունները, որոնք բարձրացնում են նրան Բաղդասարից գրեթե բոլոր առումներով։ Բաղդասարը հանուն միևնույն նպատակի մաքառում, պայքարում է նրա հետ, իբրև նրա հավատարիմ օգնականը իբրև նրա անդավաճան եղբայրը, բայց ոչ երբեք նրա հավասարը։ Ճյուղի կենտրոնական դեմքը Սանասարն է։ Նա է ընթացք տալիս գործողություններին ու որոշում նրանց ելքը։ Նա է գրեթե բոլոր գործողությունների նախաձեռնողը սկսած իրենց հոր՝ կռապաշտ թագավորի սպանությունից, վերջացրած Պղինձ և Կանաչ քաղաքներում թագավորի, նրա «փահլևանների» ու վիշապների դեմ մղած կռիվներով։ Սանասարը զուսպ է, հավասարակշռված ու շրջահայաց, իսկ Բաղդասարն ընդհակառակը, հախուռն է, անհավասարակշռված ու անշրջահայաց։ Պղնձե քաղաքի թագավորի աղջիկ Քառասուն-Ճող-Ծամի նամակն, օրինակ, Սանասարն ընդունում է հանդիստ և մինչև իսկ անտարբեր, նկատի ունենալով, որ նրա հրավերի մեջ կարող են թաքնված լինել հետին նպատակներ, դավադրություններ և այլն, մանավանդ, որ այդ քաղաքը բոլորին հայտնի է նաև «Քաջանց երկիր» (քաջքերի երկիր) անունով։ Մինչդեռ Սանասարը իր մոր՝ Ծովինարի նման զուսպ ու շրջահայաց ձևով կշռադատում է երևույթները, զարմանալով ու կասկածելով նամակի անակնկալությունից, Բաղդասարը ամենևին չմտածելով այդ մասին, հետամուտ չլինելով դեպքերին իր հախուռն ու անշրջահայաց բնավորության պատճառով մեղադրում է եղբորը ինչ որ դիտավորության մեջ («իմ ախպերը կնիկ ուզեր, կը պսակվի հալա

ձը չխարցներ, ձի փարե մը չխսաբը» (Ա. 483), և վճռում է անպայման սպանել նրան։ Դեպքերի ու երևույթների նկատմամբ Բաղդասարի ցուցաբերած այսօրինակ անշրջահայաց ու թեթևամիտ վերաբերմունքը չի մնում եղբայրական, այսպես կոչված, նեղ անձնական հարաբերությունների շրջանակներում, այլ դուրս է դալիս այդ շրջանակներից և տարածվում է սոցիալական կյանքի երևույթների վրա։ Նրա թեթևամտությունը հասնում է նույնիսկ այն աստիճանի, որ հավատալով Սանասարի կողմից շղթայված իրենց ամենաոխերիմ թշնամի կռապաշտ թագավորի կեղծ խոսքերին, ազատում է շղթաներից և, դրանով իսկ, հնարավորություն տալիս նրան իրագործելու իր վաղեմի ձգտումը՝ կազմակերպելու եղբայրների սպանությունը։

Թագավոր համոզեց Բաղդասարին,
— Ինձ թող, եթանք Սև սար,
Վերու ոչխար, վերու տավար կա,
Մեզ համար էնտեղ քեֆ կանենք, չէև քո ալբեր կա։
Բաղդասարին խաբեցին,
Յոթ տարվա գինին կապեցին գլուխ։
Ա. 133

Բաղդասար խմավ անցկուն սարխոշցավ
Վեր անհուշ, անակախ ընկավ։
Թագավոր ասաց.— դե գորզեր առեք
Ելեցեք ինի։
Ա. 315

Այս և նման կարգի այլ արարքներ նկատի առնելով վիպասանները Բաղդասարին տվել են «ծուռ» էպիտետը։ «Բաղդասարի խիտն էլ ծուռ երակ ըմ կա» (Ա. 537)։ Հենց այս «ծուռ երակով» էլ նրան տարբերում են Սանասարից և հետագա սերնդի մյուս գլխավոր ներկայացուցիչներից։ Ի դեպ այդ տարբերությունը էպոսի և ոչ մի պատումում չի վերաճում հակադրության։ Բաղդասարը իր վերոհիշյալ «ծուռ երակով» հանդերձ վիպասանների համար մնում է իբրև սիրելի կերպար։

Բաղդասարն, այնուհետև, ի տարբերություն Սանասարի հանդես է բերվում վախկոտ գծերով։ Մինչդեռ Սանասարը առանց վարանելու ու վախի իրեն նետում է ծովը այն գիտակցությամբ, թե՝ «Մենք մե թալինք ջոր աղեկ է քան երթանք կռապաշտ թագավոր մե մատղի կոքերու առաջ» (Ա. 130)։ Բաղդասարը վախից հրաժարվում է եղբորն հետևելուց, ասելով թե՝ «Աղբեր խոդն (հոգին) քաղցր ի, ձի չրմ թալը ջոր» (Ա. 312)։ Նա ակնհայտ վախկոտություն է ցուցաբերում նաև այն ժամանակ, երբ ծովի հատակից դուրս է դալիս Սանասարը։ Գազանի տեղ ընդունելով կաթնաղբյուրի շնորհիվ մի քանի ժամում հզորացած ու ֆիզիկապես մեծացած եղբորը, բարվոք է համարում մեռնել կռապաշտ թագավորի ձեռքով, քան կեր դառնալ «ջանավարին»։

Ասաց.— երթար կռապաշտ թագավոր ինձ մատղեր,
Աղեկ էր, քան եսա ջանավար ինձ ուտեր։
Ա. 131

Չնայած այս վախկոտությանը Բաղդասարը մեծ կարծիք ունի իր մասին, իր հոգեկան և առանձնապես ֆիզիկական ուժի մասին։ Լավ չճանաչելով Եղբորը, նրա համեստությունն ընդունում է իբրև թուլության նշան, իրեն ուժեղ է համարում նրանից և գտնում է, որ գեղեցիկ Քառասուն-Ճող-Ծամը արժանի է միայն իր նման կտրիճին։ Այս մեծամտությունը հասնում է այն աստիճանի, որ նա վճռում է սպանել Սանասարին, կարծելով թե դրանով հետևում է «գեղեցիկը կտրիճին» վաղուց սահմանված ժողովրդական կանոնին։ «Տը զանիմ՝ զՍանասար սպանիմ, երթամ ախչիկ բերիմ ձի խամ։ար» (Ա. 319)։ Նույն հավակնոտությամբ է տառապում նաև Զենով Հովանը։ Սա էլ կարծելով, թե ինքն ուժեղ է Դավթից, գեղեցիկ Խանդութին տիրելու համար ցանկանում է սպանել նրան։ «Խոսք մ ենու մոտեն, մեկ էնու մոտեն, կը խասնին իրոր։ Ինչ Զենով Հովան ա, սրտով կգանա, որ զԽանդութ առնի, ինչ Դավիթն ա թունա (կատակ) կանի խետ։ Դավիթ կասա «Զե նա ըզ տր սպանա, մեկ զեն թալիմ գետին, խենք»։ Ըզ Զենով Հովան կը թալա գետին, Զենով Հովան կասա.— Դավիթ չելնի ձի տր սպանես։ Հատե — կելնի վե, իրար գլոխ կը պագին, կելնին կը կան» (Ա. 926)։ Այսպիսով, նրանք խախտում են «գեղեցիկը կտրիճին» սահմանված կանոնը և երևան բերում իրենց բնավորության մեջ արմատավորված հավակնոտությունը։ Տեղի ունեցած մենամարտերը փաստորեն ուղղված են հենց այդ հավակնոտության դեմ, որովհետև իրականում Սանասարը կտրիճ է Բաղդասարից, իսկ Դավիթը՝ Հովանից։ Սակայն հօգուտ Բաղդասարի և Հովանի պետք է նշել, որ նրանք չեն համառում իրենց սխալների մեջ։ Ինչպես մյուս դեպքերում, այնպես էլ վերոհիշյալ մենամարտերի ժամանակ նրանք զգում են իրենց սխալը, զղջում են իրենց համառության համար, համոզվելով, որ Սանասարն ու Դավիթը կտրիճ են իրենցից, և որ այդ պատճառով գեղեցիկ Քառասուն-Ճող-Ծամն ու Խանդութ խաթունը արժանի են նրանց և ոչ իրենց։ Այս որոշակի արտահայտվում է Բաղդասարի հետևյալ խոսքերում։

Սանասար թող, թող քո ախպերն եմ,
Արի բարիշենք, էլինք վե,
Տու վըր ձի կտրիճ ես.
Ես քե դաստուր տվեր եմ,
Իլի վե, գնա են խանում առ պի։

Ա. 611

Կարելի է նշել Բաղդասարի բնավորությանը բնորոշ մի քանի ուրիշ գծեր ևս՝ շուտ բռնկվել, նախիվություն և այլն, բայց բերածներն էլ բավական են համոզվելու, որ նա իրրև մարդկային անհատականություն տարբերվում է Սանասարից։ Երբեք չի կարելի Բաղդասարին շփոթել Սանասարի հետ և ընդհակառակն, որովհետև նրանք, ինչպես տեսանք, ունեն որոշակի ըմբռնումներ, որոշակի դեմք, կերպարանք, մարդկային բնավորություն։ Այս փաստը բացահայտում և ընդգծում է վիպասանների արվեստի խորապես ռեալիստական լովանդակությունը։

Ի լրումն այդ բովանդակության անհրաժեշտ է նշել նաև, որ Սանասար-Բաղդասար եղբայրները իսկական մարդկային անհատականություններ ու բնավորություններ լինելուց բացի, միաժամանակ, ինչպես արդեն ցույց տրվեց, ընդհանուրի կրողն են, այսինքն՝ մարմնավորում են հայ ժողովրդին և

իրենց ուսերի վրա տանում էպոսում ծավալվող իրադարձությունների ծանրությունը։ Իբրև հայ ժողովրդի մարմնացումներ նրանք արտացոլում են նրա պատմական ճակատագիրը, նրա մաքառումներն ու ազգային բնավորության մի քանի գծերը՝ աշխատասիրությունն ու վարպետությունը, օջախ ստեղծելու և այն հարստացնելու անդադրում ձգտումը, մարդասիրությունը, ժողովրդասիրությունը, հայրենասիրությունը, ազատասիրությունը, ատելությունը բռնության նկատմամբ և նրա դեմ հերոսաբար պայքարելու անկոտրում կամքը։

Երկվորյակ եղբայրների հասարակական բնավորության այս գծերը անցնում են էպոսի հաջորդ ճյուղերի գլխավոր կերպարներին։ Ավելի ճիշտ, ժողովուրդը պատմական զարգացման նոր էտապում իրեն մարմնավորում է նոր հերոսների մեջ, հերոսներ, որոնք նախորդներից տարբերվում են ոչ միայն իրենց մարդկային անհատականությամբ, այլև իրենց վերագրված ընդհանուր գծերի՝ հայրենասիրության, ժողովրդասիրության կամ մի այլ գծի նոր բովանդակությամբ։ Այս նշանակում է, որ Սանասարի ու Բաղդասարի կերպարներում խտացված հայ ժողովրդի ազգային բնավորության մի շարք գծեր՝ Մեծ Մհերի, Դավթի ու Փոքր Մհերի մոտ ստանում են նոր իմաստ, դառնում են նոր որակ, որովհետև վերջիններս իրենց գործողություններով արտացոլում են հայ ժողովրդի կյանքի ու պատմական ճակատագրի տարբեր էտապները, նրա զարգացման տարբեր հասակները։